ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 258 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 03517269) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզում, Իջևան համայնքում, Երևան քաղաքի վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» N 109-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ֆրեյա էնդ Սոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00169984) 2023 թվականի նոյեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տարայավորված խմելու ջրի մատակարարում՝ 180,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էնջի Հոլդինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00240216) 2023 թվականի նոյեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի

ապրիլի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի, օժանդակ սարքավորումների, մանկական խնամքի միջոցների և այլ անհրաժեշտ բժշկական ապրանքների մատակարարում՝ 3,095,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Շահնազարյան Արտակ Արամայիսի» Ա/Ձ-ի հետ (ՀՎՀՀ՝ 27966534) 2023 թվականի նոյեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կենցաղային ապրանքների մատակարարում՝ 11,815,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Տաթև գիտակրթական համալիր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851528) 2023 թվականի նոյեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մասնագիտական դասընթացների կազմակերպում՝ 1,430,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Արդատեկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01558445) 2023 թվականի նոյեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կարի մեքենաների և այլ ապրանքների մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Պիկո-Վիկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00871025) 2023 թվականի նոյեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների մատակարարում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

17.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ